ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՍԱՀՈ» (ՆԱՖԱՐՈՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 45 - 46 (17052) ՇԱԲԱԹ 11 ՀՈՒՆԻՍԻ 2022 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼ ԵՆՔ, ՀԻՄԱ ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ ԵՎՐՈՊԱՅԻՆԵՐԻ ԻՄԱՍՏՈՒՆ ՈՒ ԱՐԴԱՐ ՈՐՈՇՄԱՆԸ»

Հունիսի 6-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու գլխավորությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը, որի մեկնարկում վարչապետը հակիրճ ամփոփեց Բրյուսել կատարած այցի արդյունքները, ինչպես նաեւ՝ Եվրամիության անդամության թեկնածուի կարգավիճակի հետ կապված հարցեր:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու խոսքով, ասոցացված եռյակի շարքում, որը միավորում է Վրաստանը, Ուկրաինան եւ Մոլդովան, Վրաստանն իր բոլոր պարամետրերով անվիճելի առաջատարն է՝ եվրոպացի ու ամերիկացի գործընկերների եւ հեղինակավոր կազմակերպությունների ու կառույցների գնահատմամբ:

- Ուզում եմ պարզաբանում տալ մեր քաղաքա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵ. «ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵՐ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆ ԱԿՆՀԱՅՏ Է»

«Վրացական երազանքի» նախագահ Իրակլի Կոբախիձեն, անդրադառնալով ասոցացված եռյակին՝ Վրաստանին, Ուկրաինային եւ Մոլդովային Եվրամիության անդամակցության թեկնածուի կարգավիճակի հանձնման գործընթացին եւ այդ առումով ընդդիմության կողմից ծավալած քարոզարշավին, «Իմեդի» հեռուստաալիքի ուղիղ եթերում զուգահեռներ անցկացրեց Վրաստանի եւ Մոլդովայի միջեւ՝ մանրամասնելով Մոլդովայի եւ Ուկրաինայի նկատմամբ Վրաստանի առավելությունները:

«Ազգային շարժումը» երկրի համար մոբիլիզացրել է իր համակիրներին՝ ի տարբերություն այս կարեւոր խնդրի: Մեր երկրի առավելությունների մասին Կոբախիձեի մանրամասն բացատրությունները «կազմակերպված հարձակման» առարկա են դարձել: Սա այն դեպքում, երբ Վրաստանը սպասում է թեկնածուի կարգավիճակի: Զրույցի ընթացքում «Վրացական երազանքի» նախագահը նշեց, որ Վրաստանի սահմանադրությունը նշում է, որ ՆԱՏՕ-ին եւ Եվրամիությանն ինտեգրվելը երկրի խնդիրն է, մինչդեռ Մոլդովան սահմանադրական մակարդակով հայտարարել է չեզոքություն եւ մտադիր չէ լքել ԱՊՀ-ն: Սրանք անհերքելի փաստեր են, եւ թե ինչու է դա հիմք տալիս, անհասկանալի է:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՄԱՄՈՒԿԱ ՄԴԻՆԱՐԱՁԵ. «ԹԵԿՆԱԾՈՒ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՑՈՎ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՆ ՍՏԵՂԾՈՒՄ»

Վրաստանի «Վրացական երազանք» իշխող խմբակցության ղեկավար Մամուկա Մդինարաձեն, մեկնաբանելով Եվրամիության անդամակցության թեկնածուի հարցով Եվրախորհրդարանում ընդունված բանաձեւը, հայտարարեց, որ Վրաստանում երկրորդ ճակատ բացելու ծրագրում ներգրավված են 10-ից ավելի եվրապատգամավորներ:

- Մեկ ամիս առաջ Եվրոպայից հստակ դրական եզրակացություն եղավ, իսկ մեկ ամիս անց մեկ տասնյակից ավելի եվրոպացի գործընկերներ դուրս եկան եւ

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

ԻՐԱԿԼԻ ՔԱՐՍԵԼԱՁԵ. «ՄԵՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ ՄԱՅՐՈՒՂԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ Է»

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Իրակլի Քարսելաձեն, լրագրողներին ճանապարհային ենթակառույցային նախագծերի ներկայացմանը, հայտարարեց, որ կառավարության համար առաջնահերթայիններից մեկը մայրուղային ճանապարհների շինարարությունն է:

Նրա խոսքով, այդ կապակցությամբ նշանակալի է Արեւելք-Արեւմուտք մայրուղին:

- Դա միջազգային մայրուղի է, որը սկսվում է Ֆրանսիայի Բրեստ քաղաքից եւ հասնում Չինաստանի սահմաններին,- հայտարարեց նախարարը եւ հավելեց, որ Արեւելք-Արեւմուտք մայրուղային Կարմիր կամուրջ-Սադախլո հատվածը, որը սահմանակից է Հայաստանին եւ Ադրբեջանին, արդեն կապված է Փոթիի նավահանգստի, ինչպես նաեւ՝ Թուրքիայի սահմանամերձ Սարփիի անցումակետին:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԵՐԹԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՋԻՆ

Հունիսի 6-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախագահությամբ, անցկացվեց Վրաստանի բնակչության մարդահամարի կառավարական համակարգող հանձնաժողովի առաջին նիստը:

Նիստում Վրաստանի Ազգային վիճակագրական վարչությունը հանձնաժողովի հաստատմանն է ներկայացրել 2024 թվականի մարդահամարի ծրագիրը, որը ներառում է մարդահամարի հիմնական սկզբունքները, մեթոդական եւ կազմակերպչական հարցեր:

Համաձայն ծրագրի՝ հաջորդ մարդահամարի ժամկետը կառավարական համակարգող հանձնաժողովի կողմից սահմանվում է 2024 թվականի վերջին:

Կառավարական համակարգող հանձնաժողովի որոշմամբ, բնակչության մարդահամարի հետ մեկտեղ, կանցկացվի նաեւ գյուղատնտեսական գրանցումը, որի արդյունքում, սոցիալական եւ ժողովրդագրական տվյալների հետ միասին, տեղեկատվություն կմշակվի գյուղատնտեսական ներտնտեսական ակտիվությունների վերաբերյալ:

Նշենք, որ կառավարական համակարգող հանձնաժողովը ստեղծվել է երկրի կառավարության որոշմամբ: Վերջին անգամ Վրաստանում մարդահամարը անց է կացվել 2014 թվականին:

ՇՐՋԱՅՑ

ՀԱՇՏԵՑՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՊԵՏՆԱԽԱՐԱՐԸ ՔՎԵՄՈ ՔԱՐԹԼԻՈՒՄ

Հունիսի 9-10-ին Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Թեա Ախվլեդիանին շրջայցով գտնվում էր Քվեմո Քարթլիի տարածաշրջանում:

Այցի շրջանակներում, Թեա Ախվլեդիանին հանդիպում ունեցավ Քվեմո Քարթլիի տարածաշրջանի պետական լիազոր-նահանգապետ Գիորգի Դոխտուրիշվիլու եւ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ: Պետնախարարն այցելեց Մառնեուլիի, Գարդաբանիի, Բոլնիսիի եւ Դմանիսիի մունիցիպալիտետների մի շարք գյուղեր, հանդիպումներ ունեցավ տեղի բնակիչների հետ: Թեա

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՆՈՐ ՍՊԱՌՆԱԼԻՔ

ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂՐԵԼԻՁԵ. «ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՆ ԿԱՐՈՂ Է ԱՎԵԼԱՆԱԼ ««ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿԸ»

Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեի խոսքով, կորոնավիրուսը դեռեւս լրիվությամբ չի հաղթահարվել: Վերջին մեկ շաբաթի կտրվածքով վարակվել է 514 մարդ, մահացել է 7-ը:

Ամիրան Գամղրելիձեն նշեց, որ կորոնավիրուսին կարող է ավելանալ «կապիկի ծաղիկը»: Ճիշտ է, ներկայիս տվյալներով Վրաստանում «կապիկի ծաղիկ» վիրուսի դեպք չի գրանցվել: Այդուհանդերձ, այս հանգամանքը, ըստ գլխավոր վարակաբանի, հանգիստ լինելու տեղիք չի տալիս:

Նրա խոսքով, այս փուլում գենոմի հաջորդականությամբ կարելի է հայտնաբերել կասկածելի դեպք, եւ շուտով երկրում կլինեն արագ PCR թեստեր՝ վիրուսը ախտորոշելու համար:

- Հերթականացման գործընթացը տեւում է երեքից 4-5 օր: Ինչ վերաբերում է արագ թեստերին, ապա մի քանի օրից, հաջորդ շաբաթ կունենանք պրայմերներ՝ այս թեստը տեղադրելու համար,- ասաց Ամիրան Գամղրելիձեն:

Նրա խոսքով, Եվրոպայի դեղամիջոցների գործակալությունը թույլատրել է դեղամիջոցը, որը կարող է օգտագործվել «կապիկի ծաղիկի» ժամանակ: Գամղրելիձեի խոսքով, այսօր աշխարհում հաստատվել է «կապիկի ծաղիկ» վիրուսի մոտ 400 դեպք:

ՇՐՋԱՅՑ

ՀԱՇՏԵՅՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՊԵՏՆԱԽԱՐԱՐԸ ՔՎԵՄՈ ՔԱՐԹԼԻՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ախվլեդիանին հանդիպեց նաեւ Մառնեուլիի «Կանանց սենյակի» ներկայացուցիչների հետ: Թեա Ախվլեդիանին քաղաքապետարանում կանանց հիմնահարցերով աշխատող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին ներկայացրեց Քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման պետական ռազմավարության շրջանակներում էթնիկ փոքրամասնություններին պատկանող կանանց հզորացման եւ աջակցությանն ուղղված միջոցառումները:

Հանդիպումներում առանձնակի խոսվեց քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման պետական քաղաքականության իրականացման, ձեռքբերված առաջընթացի եւ 10-ամյա ռազմավարական փաստաթղթով ուրվագծված առաջնահերթությունների մասին:

- Այս անգամ Քվեմո Քարթլիի տարածաշրջանի չորս մունիցիպալիտետներում հանդիպումներ ունեցանք ազգային փոքրամասնություններով խիտ բնակեցված վեց գյուղերի ներկայացուցիչների հետ, որոնց հետ քննարկեցինք քաղաքացիական հավասարության եւ ինտեգրման պետական քաղաքականության ռազմավարական նպատակները եւ դրանց հասնելու կոնկրետ ուղիները: Հատկապես գյուղական վայրերում մեծ հետաքրքրություն կա նման հանդիպումների նկատմամբ, որտեղ մենք քննարկեցինք բնակչության կարիքները եւ նրանց տեսակետներն իրենց առնչվող թեմաների շուրջ,- ասաց Թեա Ախվլեդիանին:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ԲԱՆԱՁԵՎԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՐՑՈՎ

Հունիսի 9-ին Նյու Յորքում, ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովը, 76-րդ նստաշրջանի շրջանակներում, ընդունեց Վրաստանի եւ աշխարհի տարբեր տարածաշրջանների երկրների կողմից (ընդհանուր առմամբ՝ 61) նախաձեռնած՝ «Աբխազիայից եւ Ցխինվալիի տարածաշրջանից բռնի տեղահանված անձանց եւ փախստականների կարգավիճակի մասին» բանաձեւ: Նշված բանաձեւին աջակցել է 95 պետություն:

Վրաստանի արտաքին գործերի նախարարության հաղորդմամբ՝ Վրաստանը այս բանաձեւը ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովին է ներկայացնում 2008 թվականից:

Բանաձեւի համահեղինակների թվում են Վրաստանը, Ավստրալիան, Ավստրիան, ԱՄՆ-ը, Նոր Զելանդիան, Բելգիան, Բուլղարիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Էստոնիան, Իսպանիան, Իռլանդիան, Թուրքիան, Ճապոնիան, Իտալիան, Կանադան, Լատվիան, Լիտվան, Լիխտենշտեյնը, Մոլդովան, Մոնտենեգրոն, Նիդերլանդները, Նորվեգիան, Պորտուգալիան, Ռումինիան, Ֆրանսիան,Հունաստանը, Սլովակիան, Սլովենիան, Հունգարիան, Ուկրաինան, Ֆինլանդիան, Խորվաթիան, Շվեդիան, Չեխիան, Հյուսիսային Մակեդոնիան, Ջիբութին, այլ երկրներ:

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ՝ ԱԲԽԱԶ ԲԼՈԳԵՐԻ ԴԵՄ

Բռնազավթված Աբխազիայի դե-ֆակտո անվտանգության ծառայության, այսպես կոչված, քննչական դեպարտամենտը, «Հայրենիքի դավաճանության» մեղադրանքով քրեական գործ է հարուցել՝ 1994 թվականի ծնունդ, Տղվարչելիի բնակիչ, ճանաչված բլոգեր Դաուր Բուավազի նկատմամբ:

Ներկա դրությամբ բլոգերը, ըստ երեւույթին, գտնվում է Վրաստանի կողմից վերահսկվող տարածքում: Ինչպես նշեց կովկասյան հարցերի փորձագետ Մամուկա Արեշիձեն՝ Բուավազը աբխազական հասարակության գիտակցությանն է հասցնում այն գաղափարը, որ Աբխազիայի համար միակ ելքը Վրաստանի հետ հարաբերությունների կարգավորումն է եւ նրա «հանցանքը» հենց այդ է:

Ինչպես հայտարարել է Դաուլ Բուավազը, ինքը եթեր է արձակել իր համոզմունքը, որ Աբխազիան ինքնավարության կարգավիճակով տեսնում է Վրաստանի կազմում:

- Միայն այդ դեպքում մենք կունենանք զարգացման հնարավորություն: Կտրականապես դեմ եմ, որ Աբխազիան լինի Ռուսաստանի հետ,- հայտարարել է Բուավազը:

ԼԵՎԱՆ ՄԱՄԱԼԱՁԵՆ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ Է ՎՐԱՍՏԱՆ

Լեւան Մամալաձեն, ով 2000-ական թվականներին, Էդուարդ Շեւարդնաձեի նախագահության օրոք զբաղեցնում էր Քվեմո Քարթլիի տարածաշրջանի պետական լիազոր-նահանգապետի պաշտոնը, իշխանափոխությունից հետո, Միխեիլ Սակաշվիլու օրոք, հեռակա կարգով դատապարտվել է 17 տարվա ազատազրկման, վերադարձել է Վրաստան:

- Քաղաքականությամբ զբաղվելու ցանկություն չունեմ, եղել եմ քաղաքականության մեջ, բարձր պաշտոններ եմ զբաղեցրել եւ ազդեցություն եմ ունեցել: Քաղաքականության մեջ գտնվելը նշանակում է պայքար իշխանության համար, իսկ ես դա չեմ ցանկանում,- հայտարարեց Լեւան Մամալաձեն:

Ի պատասխան, թե «Վրացական երազանքի» իշխանությունն ինչու ընդունեց Մամալաձեի համաներման որոշումը, ասաց.

- Այդ որոշումը «Վրացական երազանքը» չի ընդունել, դա ընդունել է Վրաստանի խորհրդարանը: Խորհրդարանն ընդունեց համաներման մասին օրենք:

ՎԱՏԻԿԱՆ

ՀՌՈՄԻ ՊԱՊԸ ԾՐԱԳՐՈՒՄ Է ՊԱՇՏՈՆԱԹՈՂՈՒԹՅՈՒՆ

Հռոմի Պապ Ֆրանցիսկ Առաջինը, ելնելով առողջական վիճակից, հնարավոր է, իր նախորդի Բենեդիկտ 14-րդ Պապի օրինակով, պաշտոնաթող լինի: Այդ մասին տեղեկատվություն է տարածվել արեւմտյան լրատվամիջոցներում: Ըստ այդ տեղեկատվության՝ Պանտիֆիքը ունի տեղաշարժերի հետ կապված հիմնախնդիրներ, որի արդյունքում վերջին ամսվա ընթացքում տեղաշարժվում է սայլակով: Նշենք, որ վերոնշյալ տեղեկատվությունը տարածվեց նրանից հետո, երբ անցյալ շաբաթ Հռոմի Պապը հայտարարեց, որ օգոստոսի 27-ին մտադիր է 21 հոգեւորականների շնորհել կարդինալի աստիճան:

ԹՈՒՐՔԻԱ

ԴԵՄ Է ՇՎԵԴԻԱՅԻ ԵՎ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՆԱՏՕ-ԻՆ

Անկարան նախկինի նման չի համաձայնել Շվեդիայի եւ Ֆինլանդիայի անդամակցությանը ՆԱՏՕ-ին: Այս մասին հայտարարեց Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը:

- Շվեդական հեռուստաընկերությունը հարցազրույց է վարել ահաբեկչական խմբավորումների առաջնորդների հետ: Դրանից հետո մենք չենք կարող ասել՝ բարի գալուստ ՆԱՏՕ: Նույնը վերաբերում է Ֆինլանդիային,- ասաց Թուրքիայի նախագահը:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

ՋՈՆՍՈՆԸ ՊԱՀՊԱՆԵԼ Է ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԸ

Մեծ Բրիտանիայի վարչապետ Բորիս Ջոնսոնը վստահության քվե է ստացել՝ Մեծ Բրիտանիայի Պահպանողական կուսակցությունից պատգամավորների քվեարկության ընթացքում:

Քվեարկության ընթացքում 211 խորհրդարանական արտահայտել է՝ աջակցություն Ջոնսոնի, անվստահության քվեի օգտին ձայն է տվել 148 պատգամավոր: Դա նշանակում է, որ նա մնում է պահպանողականների առաջնորդ եւ երկրի վարչապետ:

Անվստահության քվե հայտնելու համար առնվազն անհրաժեշտ է եղել կառավարող Պահպանողական կուսակցության 359 պատգամավորներից 180-ի ձայնը:

Ջոնսոնը հայտնվել էր սկանդալի կենտրոնում, երբ հայտնի է դարձել Դաուսինգ Սթրիթիում անցկացված երեկույթներին նրա մասնակցությունը՝ Մեծ Բրիտանիայում կորոնավիրուսի դեմ պայքարի ամենալարված շրջանում:

ՌՈՒՍ - ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՅՍՕՐ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ԶՈՀՎԵԼ Է 14 ՎՐԱՑԻ ՄԱՐՏԻԿ

Ուկրաինայում հունիսի 9-ին եւս մեկ վրացի մարտիկ զոհվեց:

Ըստ տեղեկությունների՝ զոհվողը Կ.Շ.-ն է, ով ընտանիքի հետ ապրել է Ուկրաինայում, եղել է Ուկրաինայի քաղաքացի:

Ուկրաինայում Ռուսաստանի կողմից փետրվարի 24-ին սանձազերծված պատերազմում առայսօր զոհվել է 14 վրացի մարտիկ:

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ՝ ՊՈՒՏԻՆԻ ԵՎ ԱՅԼ ՌՈՒՍ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկու հրամանագրով՝ պատժամիջոցներ են սահմանվել ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի, մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովի, Անվտանգության խորհրդի քարտուղար Նիկոլայ Պատրուշեւի, ՌԴ վարչապետ Միխայիլ Միշուստինի եւ Ռուսաստանի կառավարության գրեթե բոլոր անդամների դեմ:

Պատժամիջոցներ են սահմանվել ընդհանուր 35 անձանց նկատմամբ: Ցուցակում են նաեւ ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը, պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն, ՌԴ ներքին գործերի նախարար Վլադիմիր Կոլոկոլցեւը եւ Արդարադատության նախարար Կոնստանտին Չույչենկոն:

Վ.ԶԵԼԵՆՍԿԻՆ ՊԱՏՐԱՍՏ Է Վ.ՊՈՒՏԻՆԻ ՀԵՏ ՈՒՂԻՂ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին հայտարարեց, որ պատրաստ է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ ուղիղ բանակցությունների:

- Ես հաստատակամ եւ վճռական եմ նախագահ Պուտինի հետ ուղիղ բանակցությունների համար, եթե մենք պատրաստ ենք լրջորեն քննարկել այս պատերազմի ավարտը,- ասաց Վլադիմիր Զելենսկին:

ՀՐԹԻՌԱԿՈԾՎԵԼ Է ԿԻԵՎԸ

Ռուսական ուժերը հրթիռակոծել են Ուկրաինայի մայրաքաղաքը: Կիեւի քաղաքապետ Վիտալի Կլիչկոյի խոսքով, հրթիռային հարձակումներն իրականացվել են Դարնիցկի եւ Դնեպրովսկի շրջաններում: Ռմբակոծվել են քաղաքային ենթակառուցվածքները:

Հրթիռակոծության հետեւանքով ոչ ոք չի զոհվել, վիրավորներից մեկը հոսպիտալացված է:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԿՀԱՐՎԱԾԻ ԱՅՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ՎՐԱ ԴԵՌ ՉԻ ՀԱՐՁԱԿՎԵԼ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի խոսքով, Արեւմուտքից Ուկրաինային հրթիռային համակարգեր մատակարարելու դեպքում, Ռուսաստանը հարվածներ կհասցնի այն թիրախներին, որոնց դեռ չեն հարվածել:

Ռուսաստանի նախագահը նշեց, որ ԱՄՆ-ի կողմից Կիեւին ռեակտիվ համակարգերի մատակարարումը կապված է ուկրաինական ռազմական տեխնիկայի կորուստների համալրման հետ:

Նրա խոսքով, ռուսական կողմը գիտակցում է, որ նախատեսվում է հրթիռներ մատակարարել 45-70 կիլոմետր հեռավորության վրա, սակայն, եթե մատակարարումը շարունակվի, Մոսկվան կշարունակի ոչնչացնել դրանք:

- Եթե դրանց մատակարարումը շարունակվի, մենք համապատասխան եզրակացություններ կանենք եւ կօգտագործենք մեր զենքերը, որոնք բավականաչափ ունենք՝ հարվածելու այն թիրախները, որոնց վրա դեռ չենք հարձակվել,- ասաց Վլադիմիր Պուտինը:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ՍՏԱԺԱՎՈՐՈՒՄԸ՝ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՍՏԱԺ

Հանրային աշխատանքում ստաժավորումը կդիտվի որպես աշխատանքային ստաժ:

Համապատասխան փոփոխությունները պատրաստել է «Վրացական երազանք» խմբակցությունը:

Օրինագծում նշվում է, որ օրենքը չի ճանաչում ստաժավորում եւ ստաժորհասկացությունը, ինչը մարտահրավեր է, քանի որ պրակտիկանտները դեռեւս աշխատում են հանրային ծառայություններում, սակայն չեն համարվում պրակտիկանտ եւ չեն կարող մասնակցել առաջինի պաշտոնի համար փակ մրցույթին:

Խմբակցությունը գտնում է, որ, հանրային ծառայության համակարգի ամրապնդման եւ զարգացման համար, անհրաժեշտ է երիտասա'րդ, մոտիվացվա'ծ եւ եռանդո'ւն կադրերի հնարավորություն տալ՝ հանրային ծառայությունում աշխատանքի տեղավորելու համար:

Ինչ վերաբերում է ուղղակի փոփոխություններին, ապա օրենքի նախագծով սահմանվում են պրակտիկանտներին ներկայացվող հիմնական պահանջները, պայմանագրի լուծման հանգամանքները, իսկ պրակտիկա անցնելու կանոնները կսահմանվեն կառավարության որոշմամբ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿՓՈԽՎԻ

Ինչպես հայտարարեց Վրաստանի փախստականների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության փոխնախարար Թամար Բարկալաիան՝ առողջապահության նախարարությունն աշխատում է սոցիալական աջակցության համար անհրաժեշտ վարկանիշային միավորների հաշվարկման կանոնի փոփոխման վրա եւ այն կավատվի մինչեւ տարեվերջ:

- Մենք գիտենք այն մարտահրավերները, որոնք կապված են միավորային համակարգի հետ: Կան խոցելիության նախապես սահմանված չափանիշներ: Հատուկ չափանիշների վերաբերյալ տեղեկատվություն մուտքագրելու դեպքում՝ միավորները գեներացվում են վիճակագրական բանաձեւով: Ո'չ սոցիալական գործակալը, ո'չ էլ որեւէ այլ աշխատող այս գործին միջամտելու հնարավորություն չունի: Այս միավորային համակարգը լավ է նրանով, որ սոցիալական գործակալը կամ այլ աշխատող հնարավորություն չունի սուբյեկտիվորեն որոշելու՝ ում օգնել, ում՝ ոչ: Սակայն, ինչպես յուրաքանչյուր ծրագիր, սա եւս ունի խնդիրներ, օրինակ, չի կարող որոշել խոցելիության բոլոր տեսակները,- ասաց Թամար Բարկալաիան:

ՀՈՒԼԻՍԻ 1-Ի՞Ց ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՍԱԿԱԳԻՆԸ ԱՎԵԼԱՑՎՈՒՄ Է

2022 թվականի հուլիսի 1-ից շրջաններում գազի սակագինը կբարձրանա ոչ կենցաղային սպառողների, այլ տնտեսվարողների համար: Հայտարարությունը տարածել են շրջաններում գազ մատակարարող ընկերությունները:

«Թելավգազի», «Սոքար Ջորջիա գազի», «Սաքորգգազի» եւ «Ինտերտ գազի» մանրածախ ոչ կենցաղային բաժանորդների համար բնական գազի 1մ3 գինը սահմանվել է 1,38 լարի՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ):

«Բնական գազի շուկան իրականությանը համապատասխանեցնելու նպատակով, որը պայմանավորված է համաշխարհային շուկայում գների կտրուկ փոփոխությամբ, որոշում է կայացվել կարգավորել բնական գազի գինը ոչ կենցաղային սպառողների համար»,- ասված է ընկերությունների տարածած հայտարարության մեջ:

Միաժամանակ, ըստ նրանց, անփոփոխ է մնում կենցաղային սակագինը, որը սահմանում է Վրաստանի էներգետիկայի եւ ջրի կարգավորման ազգային հանձնաժողովը՝ մինչեւ 2023 թվականը:

Հիշեցնենք, որ ընկերությունները վերջին անգամ սակագինը բարձրացրել են 2021 թվականի դեկտեմբերի 1-ին: Արդյունքում, մինչեւ այժմ բոլոր բիզնես բաժանորդների համար բնական գազի 1մ3 գինը 1,15 լարի էր, ներառյալ ԱԱՀ-ն:

ՄԱՀԱՑԵԼ Է ՌԵԺԻՍՈՐ ԹԵՄՈՒՐ ՉԽԵԻՁԵՆ



78 տարեկանում մահացել է վրացի ռեժիսոր Թեմուր Չխեիձեն:

Թեմուր Չխեիձեն ժամանակին եղել է Զուգդիդիի դրամատիկական, պատանի հանդիսատեսի, Ռուսթավելու, Մարջանիշվիլու անվան թատրոնների տնօրեն, Վրաստանի հեռուստաթատրոնի գեղարվեստական ղեկավար, Թբիլիսիի պետական թատերական ինստիտուտի դերասանական եւ ռեժիսուրայի ուսուցիչ: Բեմադրել է շուրջ 80 դրամատիկական, օպերային եւ հեռուստատեսային ներկայացումներ, այդ թվում՝ Մեծահասակների հանդիսատեսի թատրոնում:

ԿԱԽԱ ԳՈՒԼԵԴԱՆԻՆ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՓՈԽՔԱՂԱՔԱՊԵՏ

Հունիսի 8-ին Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն հայտարարեց, որ Կախա Գուլեդանին կզբաղեցնի մայրաքաղաքի փոխքաղաքապետի պաշտոնը:

Կախա Գուլեդանին տարիներ առաջ զբաղեցրել է տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների փոխնախարարի պաշտոնը, եղել է նաեւ Սամգորիի շրջանի քաղաքապետ:

Նշենք, որ Թբիլիսիի նախկին փոխքաղաքապետին՝ Իլիա Էլոշվիլուն հունիսի 1-ին իր տանը մահացած են գտել:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՆ ԵՎ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ԶՈՒՐԱԲ ԺՎԱՆԻԱՅԻ ԱՆՎԱՆ ՎԱՐՉԱՐԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻՆ

Հունիսի 8-ին, կրթության եւ գիտության նախարարության Զուրաբ Ժվանիայի անվան պետական կառավարման դպրոցի տնօրեն Քեթեւան Զաղելին, Ախալքալաքիում Վրաստանի պետական ծառայողների լեզվի ուսուցման եւ ինտեգրման պետական ծրագրի շրջանակներում, հանդիպում ունեցավ քաղաքապետ Մելքոն Մակարյանի եւ սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանի հետ:

Հանդիպմանը քննարկվեցին պետական լեզվի իմացության մակարդակի բարձրացման եւ պետական ինքնակառավարման մարմինների, որպես ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ, միասնական տեղեկատվական տարածքում ներգրավելու առկա մարտահրավերները: Ինչպես նաեւ հանրային ծառայողների ինտեգրման համար վերապատրաստման ծրագրերի իրականացումը, ինչպես տեղում՝ Ախալքալաքիի ուսումնական կենտրոնում, այնպես էլ՝ Քութայիսիի համալսարանում:

* * *

Նույն օրը Զուրաբ Ժվանիայի անվան դպրոցի տնօրեն Քեթեւան Զաղելին հանդիպում ունեցավ նաեւ Նինոծմինդայի տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ:

Նինոծմինդայի քաղաքապետ Անի Մոսոյանի եւ Քեթեւան Զաղելու հանդիպմանը քննարկվեցին Զուրաբ Ժվանիայի անվան պետական կառավարման դպրոցի հիմնական կրթական եւ գործնական ծրագրերը՝ օգնելու հաղթահարել պետական եւ տեղական ինքնակառավարման ոլորտում կադրերի պակասը, ինչպես նաեւ՝ բարձրալեռնային եւ ազգային փոքրամասնություններով խիտ բնակեցված մարզերում բնակվող քաղաքացիների ինտեգրումը: Բացի այդ, քննարկվեցին նոր՝ հավատարմագրված դպրոցական կրթական ծրագրերի հեռանկարները՝ «Պետական կառավարում» ծրագրի եւ «Լեզվի ուսուցման եւ ինտեգրման» պետական ծրագրի շրջանակներում:

- Տեղացիների հիմնական մարտահրավերներից մեկը պետական լեզվի ուսուցումն ու ինտեգրումն է: Միաժամանակ, Ժվանիայի դպրոցն իր պետական լեզվի ուսուցման եւ ինտեգրման ծրագրով նպաստում է Վրաստանի քաղաքացիների ինտեգրմանը՝ մեկ միասնական պետական տարածքի մեջ,- նշեց քաղաքապետ Անի Մոսոյանը:

Նշենք, որ 2014 թվականից սկսած, Զուրաբ Ժվանիայի անվան պետական կառավարման դպրոցի ծրագրերից օգտվել է ազգային փոքրամասնությունների ավելի քան 23 000 ներկայացուցիչ, այդ թվում՝ 6 857 ուսուցիչ:

Ներկայումս դպրոցն առաջարկում է տարբեր ծրագրեր եւ դասընթացներ, ընդհանուր առմամբ՝ 27 ուսուցում է իրականացվում ինչպես առկա ձեւաչափով, այնպես էլ՝ հեռակա:

ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆԸ՝ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԿԱՆԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

Անի Մոսոյանը եւ Նինո Ծիլոսանին

«Վրացական երազանք» կուսակցության ընթացիկ տարվա մայիսին հիմնադրված կանանց կազմակերպությունը, հունիսի 5-ին, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի Բորժոմի քաղաքում անցկացրեց տարածաշրջանային խորհրդաժողով:

Խորհրդաժողովին կանանց կազմակերպության ղեկավար, Վրաստանի խորհրդարանի ագրարային կոմիտեի նախագահ Նինո Ծիլոսանին ներկայացրեց Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանային խորհրդի ղեկավարներին, այդ թվում՝ կազմակերպության վարչության անդամ, Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանին: Նրա ներկայացմամբ, Անի Մոսոյանը շրջապատի նկատմամբ հոգատար վերաբերմունքով, մարդկանց առջեւ պատասխանատվության խոր զգացումով եւ արդյունքին կողմնորոշված կին-քաղաքապետի հիանալի օրինակ է:

Միաժամանակ, Նինո Ծիլոսանին խորհրդաժողովի մասնակիցներին ծանոթացրեց կազմակերպության նպատակներին ու խնդիրներին: Խորհրդաժողովում ներկայացվեցին առողջապահության, էկոնոմիկայի եւ զբաղվածության, մշակույթի թեմաներով զեկույցներ:

Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼ ԵՆՔ, ՀԻՄԱ ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ ԵՎՐՈՊԱՅԻՆԵՐԻ ԻՄԱՍՏՈՒՆ ՈՒ ԱՐԴԱՐ ՈՐՈՇՄԱՆԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ցիներին: Մենք լավ հասկանում ենք, որ սա հեշտ գործընթաց չէ: Տվյալ դեպքում, բնականաբար, խոսքը միայն թեկնածուի կարգավիճակի մասին է, եւ դա, իհարկե, անդամակցություն չէ: Մենք երկար ու դժվարին ճանապարհ ունենք անցնելու մինչեւ անդամակցությունը, դրա մասին չենք խոսում, այլ այն, որ մենք՝ Վրաստանը, Մոլդովան եւ Ուկրաինան, կարող ենք ստանալ այս կարգավիճակը:

Մի խոսքով, ուզում եմ ողջ պատասխանատվությամբ փաստել, որ Վրաստանը, վերջին 9 տարիների ընթացքում, եղել է ականավոր բարեփոխիչ ու առաջատար Արեւելյան գործընկերության երկրների շարքում: Ավելին, ինչպես գիտեք, անցյալ տարի մենք ստորագրել ենք հուշագիր, այսպես կոչված, Համաձայնագիր եւ առանձնացել են երկրներ՝ ի դեմս Վրաստանի, Ուկրաինայի եւ Մոլդովայի: Այս ասոցացված եռյակի մեջ անվիճելի առաջատարն է Վրաստանը՝ բոլոր պարամետրերով, բոլոր ուղղություններով ու ձեռքբերումներով: Ամենակարեւորը, սա չափազանցված գնահատական չէ, սա մեր գործընկերների, մեր եվրոպացի ու ամերիկացի գործընկերների եւ հեղինակավոր կազմակերպությունների, կառույցների գնահատականն է, որ Վրաստանը բոլոր պարամետրերով առաջ է այս երկրներից,- հայտարարեց վարչապետը:

Վարչապետի խոսքով, Վրաստանը բարեխղճորեն կատարել է ստանձնած բոլոր պարտավորությունները եւ հանգիստ ու հաստատակամ կսպասի թեկնածուի կարգավիճակի վերաբերյալ ԵՄ որոշմանը:

- Մեզ համար ոչ մի խոչընդոտ չի լինի: Մենք կշարունակենք մեր աշխատանքը եւ ավարտին կհասցնենք բարեփոխումները,- նշեց Իրակլի Ղարիբաշվիլին՝ հավելելով, որ Վրաստանը շարունակում է բարեփոխումները, եւ ասոցացման նոր օրակարգում մանրամասն ներկայացված են այն բոլոր բարեփոխումները, որոնք պետք է իրականացնի Վրաստանը, եւ մի շարք նախաձեռնություններ արված են «Շառլ Միշելի համաձայնագրից»:

Անդրադառնալով Ռուսաստանի կողմից Ուկրաինայում սանձազերծած պատերազմին՝ վարչապետն ընդգծեց, որ Եվրոպայի ամենամեծ պետությունը ներքաշված է լայնածավալ պատերազմի մեջ, որը սպառնում է ոչ միայն Ուկրաինային ու նրա ինքնիշխանությանը, այլեւ Եվրոպայի անվտանգության ճարտարապետությանը եւ, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, Եվրոպան նման մարտահրավերի առջեւ չէր կանգնել:

- Սա մեծ մարտահրավեր է աշխարհակարգի համար: Այս իրականության մեջ, բնականաբար, ԵՄ անդամ երկրների մոտ ընդհանրապես թերահավատություն կա Ուկրաինայի նկատմամբ, քանի որ նրանք չեն ցանկանում այս բոլոր խնդիրները բերել Եվրոպա,- ասաց Իրակլի Ղարիբաշվիլին:

Վարչապետի հավաստմամբ, այս գործընթացում Վրաստանը պահպանել է խաղաղությունն ու կայունությունը.

Իրակլի Ղարիբաշվիլու խոսքով, իր եվրոպացի գործընկերները զարմացած են Վրաստանի տնտեսական աճից: Աղքատության մակարդակը վերջին տարիներին իջել է պատմական նվազագույնի՝ 17,5 տոկոսի:

- Մենք սպասում ենք Եվրամիության որոշմանը՝ թեկնածուի կարգավիճակի հետ կապված: Հիմա մեր իշխանությունը պաշտոնական դիմումով ապացուցեց, որ մենք հավատարիմ ենք եւ, իհարկե, ազնվորեն կատարում ենք մեր ժողովրդի պատվերը: Եթե ոչ մեր կառավարությունը, ապա ոչ թե Եվրամիությունում, այլ մենք այսօր կհայտնվեինք ծանր պայմաններում: Եվս մեկ անգամ ուզում եմ հիշեցնել մեր ընկերներին, գործընկերներին Եվրոպայում եւ երկրի ներսում, որ «Վրացական երազանքի» արժանիքն է, որ Վրաստանը ասոցացված երկիր է, մենք ունենք ազատ առեւտուր, առանց վիզայի ռեժիմ մեր քաղաքացիների համար, եւ այժմ պատիվ ունենք դիմել Եվրամիությանն անդամակցության համար: Գործնականում՝ մենք առանց հարցականի մնացինք: Բոլոր հարցերին ժամանակին արձագանքել ենք, բոլոր հարցերը, բոլոր պարտավորություններն ազնվորեն են կատարվել: Իհարկե, այժմ, երբ հերթը Եվրամիությանն է, Եվրոպան պետք է վերջնական որոշում կայացնի,- ասաց Իրակլի Ղարիբաշվիլին:

ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵ. «ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵՐ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆ ԱԿՆՀԱՅՏ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ըստ Կոբախիձեի՝ «Վրաստանը առաջադեմ երկիր է կոռուպցիայի դեմ պայքարի առումով: Մոլդովան կոռուպցիայի առումով ծանր վիճակում է: Ինչ վերաբերում է կոնկրետ պարամետրերին, ապա, գրեթե բոլոր պարամետրերով Վրաստանը մեծ առավելություն ունի թե' Մոլդովայի, թե' Ուկրաինայի նկատմամբ: Կոբախիձեն խոսել է այս փաստերի մասին, եւ «Ազգային շարժումը» երկրի համար կարեւոր խնդիր է դարձրել՝ իր կուսակցական ակտիվների համար»,- ասել է «Վրացական երազանքի» մամուլի ծառայությունը:

ՄԱՄՈՒԿԱ ՄԴԻՆԱՐԱՁԵ. «ԹԵԿՆԱԾՈՒԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՑՈՎ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՆ ՍՏԵՂԾՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նկարեցին շրջված, աղետալի իրավիճակ՝ այդպիսով հարձակվելով վրացական կառավարության վրա, հակաիրական ֆեյքեր տարածելով ոչ միայն տեղական մակարդակով, այլեւ բարձր ամբիոնից,- ասաց Մամուկա Մդինարաձեն եւ հավելեց, որ դեռեւս ապրիլի վերջին, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը, որը բաղկացած է 46 երկրներից, բանաձեւ էր ընդունել Վրաստանի պարտավորությունների կատարման մասին:

Ըստ Մամուկա Մդինարաձեի, Եվրախորհրդարանում ընթացիկ բանավեճը ծառայում է՝ Վրաստանին ԵՄ անդամ թեկնածուի կարգավիճակ չտալու խոչընդոտ ստեղծելուն:

ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

ԻՐԱԿԼԻ ՔԱՐՍԵԼԱՁԵ. «ՄԵՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ ՄԱՅՐՈՒՂԱՅԻՆ ՀԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Հետեւաբար, մայրուղու կեսից ավելին արդեն կառուցվել է եւ հանձնվել շահագործման,- ասաց Իրակլի Քարսելաձեն՝ հավելելով, որ, չնայած համավարակին, ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտը մեծ ծավալի աշխատանքներ իրականացրեց եւ արդյունքում արդեն 2021 թվականին շահագործման հանձնեց 70 կիլոմետր մայրուղային ճանապարհը, ինչը թույլ է տալիս, հինգ ժամվա փոխարեն, Թբիլիսիից Բաթումի հասնել չորս ժամվա ընթացքում:

Ինչպես նշեց Իրակլի Քարսելաձեն՝ Բաթումի տանող ճանապարհի շինարարական աշխատանքներն արդեն կատարվել են 75 տոկոսով: Ընդհանուր առմամբ՝ ծրագրված հինգ թունելներից երեքն արդեն պատրաստ են շահագործման համար եւ մյուս երկուսում աշխատանքներ են տարվում:

Ինչ վերաբերում է դարաշրջանային նախագծի Ռիկոթիի ճանապարհահատվածին, որը Արեւելք-Արեւմուտք մայրուղային ճանապարհի ամենանշանակալի հատվածն է, ակտիվ աշխատանքներ են տարվում:

- Ծրագրված 24 թունելներից երեքում երթեւեկությունը բաց է: Անցյալ տարվա սեպտեմբերից Ռիկոթիի 2 կիլոմետրանոց ճանապարհահատվածը նույնպես գործում է: 2022-2023 թվականներին լրիվությամբ կավարտվի այդ կարեւորագույն մայրուղու 52 կիլոմետրանոց հատվածի շինարարությունը: Արդյունքում, վերոնշյալ աշխատանքների ավարտից հետո, Թբիլիսիից Բաթումի հնարավոր կլինի հասնել 3 ժամ 40 րոպեում,- հայտարարեց տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարը:

Իրակլի Քարսելաձեի խոսքով, ճանապարհային ենթակառույցների շինարարական աշխատանքներին զուգընթաց, նշանակալի նախագծեր են իրականացվում նաեւ հարակից ճանապարհների եւ ենթակառույցների կարգավորման ուղղությամբ: Ինչպես նշեց նախարարը, վերոնշյալ աշխատանքներում ներգրավված է 27 հազար մարդ, նրանց մեծ մասը Վրաստանի քաղաքացիներ են: Նախարարի խոսքով, այդ մարդկանց կայուն աշխատավարձից բացի, ընձեռվում է նախագծերի իրականացման գործընթացում նոր մասնագիտություններ յուրացնելու հնարավորություն:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ԱՎՏՈՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

ԵՐԵՎԱՆ-ԹԲԻԼԻՍԻ ԱՎՏՈԱՐՇԱՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇՅԱՆՑԻ ԾՆՆԴՅԱՆ 180-ԱՄՅԱԿԻՆ

Վրաստանի եւ Հայաստանի ավտոմոբիլային սպորտի ֆեդերացիաների համագործակցությամբ, Հայաստանի ավտոմոբիլային սպորտի ֆեդերացիայի նախաձեռնությամբ եւ կազմակերպմամբ անցկացվեց ռետրո ավտոմեքենաների Երեւան-Թբիլիսի ավտոարշավ՝ նվիրված հայ հանրահայտ գործարար եւ բարեգործ Ալեքսանդր Մանթաշյանցի ծննդյան 180-ամյակին:

Գագիկ Աղաջանյանը եւ Լաշա Նարսիան

Հունիսի 5-ին, Թբիլիսիի Ազատության հրապարակում, բացվեց հին ավտոմեքենաների միացյալ ցուցահանդես, որտեղ իրենց անդամների յուրահատուկ նմուշներն էին ներկայացրել Հայաստանի եւ Վրաստանի ավտոմոբիլային ֆեդերացիաները:

Ցուցահանդեսը հերթականն էր այն միջոցառումներից, որ Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միությունը, ի նշանավորումն հայ մեծանուն գործարար ու բարերար Ալեքսանդր Մանթաշյանցի ծննդյան 180-ամյակի, իրականացնում է տարվա ընթացքում:

Նշենք, որ թբիլիսյան ցուցահանդեսին նախորդել էր համանման ցուցահանդեսի կազմակերպումը հունիսի 4-ին, Երեւանում: Թբիլիսյան համատեղ ցուցահանդեսի հանդիսավոր բացումից հետո Երեւանից ժամանած պատվիրակությանը, Հայաստանի ավտոմոբիլային ֆեդերացիայի նախագահ, ՀԱԳՄ խորհրդի անդամ Գագիկ Աղաջանյանի գլխավորությամբ, ընդունեց Վրաստանի ավտոմոբիլային ֆեդերացիայի պատվավոր նախագահ, Թբիլիսիի սակրեբուլոյի տրանսպորտային հաղորդակցության հանձնաժողովի նախագահ Շալվա Օգբաիձեն: Հանդիպմանը ներկա էին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանը, թբիլիսցի գործարար, Համաշխարհային հայկական կոնգրեսի վարչության անդամ Ռաֆիկ Աղաջանյանը:

Հենց քաղաքապետարանում էլ Վրաստանի եւ Հայաստանի ավտոմոբիլային ֆեդերացիաների նախագահներ Լաշա Նարսիան եւ Գագիկ Աղաջանյանը ստորագրեցին համագործակցության հուշագիր:

Ինչպես նշեց Շալվա Օգբաիձեն՝ սույն ավտոցուցահանդեսը Վրաստանի եւ Հայաստանի ավտոմոբիլային

ֆեդերացիաների միջեւ համատեղ կազմակերպված միջոցառումներից մեկն է: Գագիկ Աղաջանյանի խոսքով, երկու կառույցներն արդեն իսկ ունեին փոխգործակցության, միջազգային մրցույթների համատեղ կազմակերպման հարուստ ավանդույթ, այժմ խոսքը գնում է ավտոմոբիլային նոր բնույթի միջոցառումների անցկացմանը:

Հայաստանից ժամանած պատվիրակությունն այցելեց նաեւ Թբիլիսի Սուրբ էջմիածին եկեղեցի, հարգանքի տուրք մատուցեց բակում կանգնեցված Ալեքսանդր Մանթաշյանցի կիսանդրու մոտ: Հաջորդիվ այցելությունն էր հայ գրողների ու հասարակական գործիչների պանթեոն, որտեղ խնկարկվեց հայ նվիրական մեծերի հիշատակը:

Հունիսի 5-ի երեկոյան՝ ՀԱՖ ավտոշարասյունը վերադարձավ Երեւան: